Ֆարսախ հեռու, մի ընդարձակ հովտի վրայ, որ թէև զուտ հայաբնակ փոքրիկ մի գիւղ է, բայց հարուստ է վարելահողով և ճոխ բուսականութեամբ. զարդարուած է ուռենիների և բարդիների տնկաբաններով։

Գիւղը 30 տարուայ հիմնարկութիւն է. հիմք գցողներն եկած են Փէրիայի զանազան հայաբնակ գիւղերից։ Այժմ բաղկացած է 20 տնից 173 շնչով, որի 100-ը արական է և 72-ը իգական։ Նրանք պարապում են հողագործութեամբ ու մասամբ էլ անասնապահութեամբ։ Տները մեծ մասամբ մի յարկանի են և կողք կողքի շինուած, իսկ փողոցները նեղ են ու ծուռումուռ։

Գիւղն «առբաբ»ի — է, որոնք են Հասան, Նասր-Ղուլի, Մահմուդ և Խալիլ։ Գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են առբաբների հողերը և ստացած արդիւնքի մի մասը տալիս են նրանց, բացի այդ տարեկան վճարում են.

Մարգալուխ	$2^1/_2$ զռան.	Զորս ոչխարին	$2^1/_2$ զռան.
Կովին	$2^1/_2$ »	Էշին	$2^1/_2$ »

Վարելահողերը փուած են գիւղին կից, որ մեծ մասամբ ջրովի է. վարում են արօրով և օգտուում Ղրասան գետակի ջրից, որն օձապտոյտ կտրելով Ղալամելիքի դաշտավայրերն անցնում է դէպի Նոր—Ջուղա։ Բացի այդ օգտուում են աղբիւրներից, որոնք բղխում են գիւղի միջից։ Ցանում են նոյն հացահատիկները և այլ ցանովի խոտեր։

Գիւղն ունի հողաշէն մի եկեղեցի Ս. Եղիշէ անունով։ Իսկ կրթական գործն այստեղ էլ աննախանձելի է. երեք տարի առաջ եկեղեցու բակում ունեցել է խալիֆական մի դպրոց, որն այժմ փակ է։ Գիւղն ունի նաև մի ջրաղաց, իսկ դէպի հարաւ, 10 քայլ հեռաւորութեան վրայ փուած է աղայի ղալէն. դա եւրոպական ճաշակով զարդարուած երկյարկանի, գեղեցիկ մի շինութիւն է, որի կողքին շինուած է բաղնիսը։

Աւելորդ չէր լինել եթէ այստեղ յիշատակէինք այն հանգամանքը, որ այդ բաղնսում գիւղացիները ոտք դնելու